ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22-ը ապրիլ 2024թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին.
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ՊՀ ՊՍ վարչության, ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան
**Գնահատողներ.**
ՀՀ ՔՊՆ ԹԲԿ ՆՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Միրզոյան
ՀՀ ՔՊՆ ԹԲԿ ՆՏԱ բաժնի ավագ սպա, բ/ծ փոխգնդապետ Հ. Հովհաննիսյան
ՀՀ ՊՆ ՆՏԱ ՊՀ ՊՍ վարչության, ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Կ. Բենիամինյան

**Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից ներկայացված հայտը ուսումնասիրելուց հետո:**

**«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Կ. Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.**

(Կ. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «բժշկական ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1. | «Գեկոտրա Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Կ. Սահակյան)

2.1 «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է ենթակա գնահատման համար ընդունելի:
2.2 «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ս. Սահակյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Չ/հ | Ծառայության անվանումը | Նախահաշվային միավորի գների հանրագումար ՀՀ դրամ | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ (միավորի գների հանրագումար) | | |
| | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1. | Ատամնաբուժական ծառայություններ | Ատամնաբուժական ծառայություններ | 1. | «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ | 1,044,680 | - | 1,044,680 |

***Ներկայացված է առանձին փնտակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակցի առաջարկած գինը:***

3.2 «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):
3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ «Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակից ընտրված մասնակցի որոշման մասին.**

(Ս. Սահակյան)

4.1 **02.05.2024թ.-ին՝** հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) գնահատված ***«Դելյուքս Դենտալ ԼԱԲ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից.***
4.2 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները: Սույն ընթացակարգի շրջանակներում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Վ. Սահակյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-24-9/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Վ. Սահակյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Գնահատող (ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Ա. Միրաքյան

Գնահատող Հ. Հովհաննիսյան

Գնահատող Կ. Բեկնազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Սահակյան